

Աստուք շուկային մէջ կընդունուէին մետաղեայ դրամի փոխարէն: Վերջերս այս դրամադրոշմներու կարեւոր հաւաքածոյ մը մէջ տեղ ելաւ եւ արժանացաւ ուսումնասիրութեան եւ տպագրութեան⁵:

ՈՍԿԻ ԵՒ ԱՐԾԱԹ ԴՐԱՄՆԵՐ – Վենետիկի Մխիթարեան վանքը ունի մէկ ոսկի եւ քանի մը արծաթ փոքր դրամներ: Բոլորն ալ նոյնատիպ:

Այս դրամներուն Ա-կողմին վրայ կը տեսնուի կշիռը մը, ունենալով գ եւ ա գրերը կոթին ձախ եւ աջ կողմը: Կան նաեւ երկու գրեր այլ գետեղուած կշիռքին երկու սաներուն միջեւ: Գրերը գլխազիր չեն եւ շատ հաւանական է որ կը ներկայացնեն անձի մը անունը: Դրամին շուրջանակը զարդարուած է տերեւալից դափնիով մը:

Դրամին Բ-կողմին վրայ կը տեսնուի զանազան ծաղիկներու փունջ մը, իրենց յատուկ տերեւներով: Փունջին ձախ կողմը կայ իսլամական Վ թիւերը, իսկ աջ կողմը Մ, այսինքն 1232 թուականը որ կը համապատասխանէ քրիստոնէական 1815 թուականին:

Հեղինակին արծաթէ դրամը կը կռօժ մէկ կրամ, կարելի է հաշուել թէ նոյն դրամին ոսկին կը կռօժ երկու կրամ:

Վենետիկի ունեցած բոլոր դրամներն ալ շատ մաքուր վիճակի մէջ են: Թերեւս աստուք վանք մտան երբ նոր հատանուած էին: Յայտնի չէ թէ ինչ պարագաներու տակ, ուր եւ որու անունով զարնուած են այս դրամները:

Ա-կողմը եւ Բ-կողմը նոյն ուղղութեամբ ↑↑ զարնուած են: Դրամները միշտ զարնուած են հակառակ ↑↓ ուղղութեամբ, այնպէս որ այս կտորը կարելի է նկատել իբր մետաղ մը, թէեւ շատ փոքրիկ է մետաղի մը համար:

Հասկնալի է, որ այս յօդուածին մէջ բոլոր հարցումներուն չենք կրցած պատասխանել: Սակայն, հետաքրքրական է ներկայացնել այս քանի մը կտորները որոնք կը կազմեն օղակներ, հինգ հարիւր տարուայ հայ դրամագիտութեան ամալի շղթային մէջ:

Զ. ՊՏՈՒԿԵԱՆ



⁵ K. M. MacKenzie, Armenian Church Tokens, Armenian Numismatic Journal (Essays on Numismatics in Memory of Father Clement Sibilian. On the Centennial of His Death) Vol. IV. (1978). pp. 147-160, Pl. XV-XVIII.

ԱՅԱՍ ՔԱՂԱՔԻ ՓՈՂԵՐԱՆՈՑԸ ԵՒ ԼԵՒՈՆ Ա. ԱՐՔԱՅԻ ՊՂԻՆՁ ԴՐԱՄՆԵՐԸ

1968 թուականին՝ ՀԱՆԴԵՍ ԱՄՄՍՐԵԱՅ-ի էջ 213-218, Վիեննայի Մխիթարեան Վարդապետ Հ. Օգ. Սեբուկեան հրատարակած է խիստ կարեւոր յայտնութիւն մը, հետեւեալ խորագրով.
ԱՅԱՍ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ԿՈՆՈՒԱԾ ԴՐԱՄՆԵՐԸ:

Ուսումնասիրութիւնը կը վերաբերի Հեթում Ա. թագաւորի պղինձ դրամներուն: Իսկ 1978 թուականին, իր հերթին, Ե. Թ. Ներսէսեան հրատարակած Այաս հատագրուած Լեւոն Բ. թագաւորի արծաթ դրամներէն ոմանք, հետեւեալ խորագրով.
ԼԵՒՈՆ Բ. ԴՐԱՄՆԵՐԸ ՀԱՏԱՆՈՒԱԾ ԱՅԱՍ:

Այս երկու իրերայաջորդ յայտնութիւնները, Ռուբինեան դրամագիտութեան համար բացառիկ դէպքեր կարելի է համարել, որոնք պիտի գան յեղաշրջելու մինչեւ հիմա Սոյ փողերանոցին կարծեցեալ դրամներու դասակարգութիւնները, մէկ խօսքով՝ վերատեսութեան ենթարկելու Ռուբինեան դրամագիտութիւնը:

Ռուբինեան դրամագիտութեան երախտաւորը եղած է Վիեննայի Մխիթարեան Հ. Կղեմէս վրդ. Սիպիլեան, որ եղած է միջազգային անուն վայելող դրամագէտ մը: Շրջան մը եղած է Կ. Պոլսոյ Օսմանեան թանգարանի փոխ տնօրէն: Ընկերակցած է Եւրոպացի կարգ մը հնաբաններու ու դրամագէտներու, շրջած է ամբողջ Կիլիկիան եւ հաւաքած հազարաւոր Հայկական դրամներ: Գրած է Ռուբինեան դրամներու մենագրութիւն մը, որ յետ մահու հրատարակած է Հ. Գրիգորիս վրդ. Գալէմքեարեան: Այդ մենագրութիւնը ամենավստահելի աղբիւրը հանդիսացած է համարեայ հայ դրամագէտներուն: Սակայն երբեք չէ յիշատակած Այասը: Իժախտաբար մեր մատենագրութիւնն ալ լուռ է այդ մասին:

Ես ինքս, որ տեսած տասնեակ հազարաւոր դրամներ եւ դասաւորած մեծագոյն Եւրոպայի Ռուբինեան հաւաքածոնները, չեմ անդրադարձած թէ գոյութիւն ունեցեր է Այաս անունով փողերանոց մը:

Դասակարգութիւնները կատարած եմ հետեւեալ ձեւով: Ամէն անգամ երբ պիտի դասակարգեմ Լեւոնեան դրամ մը, որուն երկրորդ կողմի խորագիրը գրուած ըլլայ՝
ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ ՍԻՍԻՍ

Ես գայն կը դասակարգեմ հետեւեալ ձեւով՝
ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՍ Ի ԱԻՍ:

Ուրիշ օրինակ մը.
ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔ ԱԻՍԻՍ

Ես գայն կը դասակարգեմ՝
ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՍ Ի ՍԻՍ:

Այսօրուայ տուեալներու լոյսին տակ, մենք կը կարծենք որ վերելի ՍԻՍԻՍ եւ ԱԻՍԻՍ տեղանունները պէտք է տալ Այաս փողերանոցին:

Նման երկու պղինձներ կան հրատարակուած, մէկը կը պատկանի Ալիշանի Սիսուան-ին, որ ունի հետեւեալ տեղանունը ԱԻԱԻՍ, երկրորդը՝ կը գտնուի Փազ տը Մօրկանի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ (Քրանսերէն) իր իսկ գծագրութեամբ, տեղանունի նոյն գծագրութեամբ: Սակայն երկու մէջբերուած գծագրութիւններն ալ վերծանուած չեն: Կ. Յ. Բասմաջեան իր ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԻ մէջ, նոյնութեամբ արտատպած է գայն, սակայն չէ կրցած վերծանել վերջնալիւր ԱԻԱԻՍ տեղանունը, այլ պարզապէս գրած է՝ ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ:

Ինչու այս այսպես եղած է, պատճառներ կ'ուզէք: Թերեւս յառաջացած է փորագրիչներու պատճառաւ, կամ օտարներու գործ է:

Օրինակները կը վիտան: Այսպէս՝
Քաղաք բառը ձեւափոխուած արամեան նշուած տառերով.
ՔԱՂԱՔ կամ ՔԱՂՍՔ եւ կամ ՔՍՂՍՔ
Թագաւոր՝
ԹԱԳԱՒՈՐ կամ ԹՍԳՍՒՈՐ
Հայոց՝
ՀՍՅՈՅ կամ ՀՍՅՒՈՅ եւ կամ ՀՍՅԻ
Շինեալ՝
ՇԻՆԵՍԱ:

Ձանցառումներ կան այլ տառերու վրայ ալ: Այսպէս ՚Ի գլխազիր տառի, մէջտեղի դուրս մասը ջնջուած եւ փորագրուած ուղղահայեաց պարզ գիծով մը: Ի եւ Յ տառերը նոյնպէս: Այս բոլորէն ետք կը կարծենք որ պղինձներուն վրայ տեսնուող ՍԻՍԻՍ կամ ԱԻՍԻՍ-ները այս զանցառումներուն զոհը կրնան ըլլալ:

Այս բոլորէն ետք, տանք զանազան հաւաքածոներէն Լեւոն Ա.ի պղինձներուն մեր հաւաքած տեղեկութիւնները, որոնք կը վերաբերին Այաս փողերանոցին:

Վիեննայի Մխիթարեան Թանգարան.

- ԱԻՍԻՍ – Թիւ 480, 480բ, 481, 482, 483, 484, 507, 514 պղինձ դրամներ:
- ԱԻՍԻ – Թիւ 495, 520, 529 պղինձ դրամներ:
- ՍԻՍԻՍ – Թիւ 465, 473, 475, 478, 486, 489, 498, 502, 503, 504, 566, 567, 569, 570:



Համազգային ձեմարանի, Պէյրուսի, Փալանճեան, Մարտիկեան Թանգարանի հաւաքածոյի մէջ գտնուող Լեւոն Ա.ի պղինձներուն տարբերակները.

- ԱԻՍԻՍ – Թիւ 184
- ԱԻՍԻ – Թիւ 175, 176,
- ՍԻՍԻՍ – ուղ վերջացող դրամները
Թիւ 157, 162, 165, 166, 172, 173, 177, 178, 180, 182, 185:



Փարիզի Քրանսական Մատենադարանի մէտալներու ցուցասրահին, Կիւսթաւ Շլումպէրկէրի հաւաքածոյի Հայկական դրամներու Լեւոն Ա.ի դրամներուն տարբերակները.

- ԱԻՍԻՍ – Թիւ 118–1411, 120–1421, 126–1416, 127–1395, 128–1399, 129–1417, 131–1403, 132–22, 140–1401:
- ՍԻՍԻՍ – Թիւ 110–1412, 119–1398, 121–1407, 138–25, 144–1419:



Վիենտիկի Ս. Ղազարու վանքի Մխիթարեան հաւաքածոյի Լեւոն Ա.ի պղինձ դրամներուն Այաս հատագրուած տեղանունին տարբերակներն են.

- ԱԻՍԻՍ – Թիւ 317
- ԱԻՍԻ – Թիւ 304, 304բ, 305,
- ՍԻՍԻՍ – Թիւ 305, 307, 309, 310, 314, 316, 319, 331, 332, 333:



Նմուշներ Լեւոն Ա.ի դրամներէն



Անձնական հաւաքածոյիս մէջ ունիմ մէկ ԱԻՍԻՍ եւ վեց ՍԻՍԻՍ պղինձներ:

Այսպիսով կ'ունենանք Ռուբինեան արքաներու Լեւոն Ա.ի, Հեթում Ա., եւ Լեւոն Բ.ի Այասի փողերանոցը հատագրուած պղինձ եւ արծաթ դրամներու նորութիւնները: Անպայման որ պիտի գտնուին հետաքրքիր ու պրպտող դրամագէտներ որ յայտ բերեն նորանոր յայտնութիւններ ի փառս Ռուբինեան դրամներու:

Մի քանի խօսք Այաս քաղաքի ու նաւահանգիստի մասին:

Այաս եղած է Հայակիլիկիոյ ամէնէն վաճառաչահ քաղաքը ու միջազգային վաճառականութեան կեդրոն, ուր կային Արեւելքէն ու Արեւմուտքէն եկողներ. վաճառականներ, դեսպաններ, նստարներ, նաւապետներ, կարաւանապետներ: Եւրոպացիք իրենց հատատութիւնները, մթերանոցները ունէին եւ նաւահանգիստը միշտ լեցուած կ'ըլլար նաւերով:

Ան մեծ դեր խաղացած է տնտեսական գետնի վրայ եւ արքայական եկամուտի մեծագոյն աղբիւրը ժԳ. դարու կիսուն: Ան ունէր կարաւաններու նպաստաւոր ուղիներ որոնք կը կապէին երկիրը Սուրիոյ եւ Միջագետքի, Արեւելեան Անատոլու մինչեւ Պարսկաստան: Այսպէս որպէս թագաւորական նաւահանգիստ օտարները դայն կոչած են՝ Portus Ayacii Domini Regis Ermenie:

Ալիշան Սիսուանի մէջ Այսա քաղաքին նուիրուած երկայր ու մանրամասն նկարագրութիւն մը ունի այս քաղաքի մասին, էջ 356-402: Կը ներկայացնենք փոքր հատուած մը. «Այսա լուելեայն իմն այլ մեծապանծ փառօք՝ յառնէ յեթնդարեան լուութեանց եւ աւերանաց՝ ՚ի նոր կեանս, արդարեւ ոչ երկարս, ըստ կարճելոյ բաղդի Ռուբինեան պայազատաց Հայոց, այլ այնքան լիուլի ոգւով՝ շարժմամբ եւեռանդեանը, մինչեւ ընդյաւերժայիշատակ քաղաքաց երկրի դասի. եւ իբրեւ զդար մի ժամանակի հարստութեան մերայրոցս՝ լինել ամենաբարձաւաճ տուրեւառիկ վաճառականութեամբ եւ այլազան ազանց երթեւկիւ սիրտ աշխարհի եւ տէրութեան նոցին, որպէս Սիս՝ գլուխ. այլ եւ քան զգլուխն պերճացեալ աշխարհածանօթ հռչակաւն, որպէս եւ քան զամենեայն առաջին շահաստանս աշխարհին, եւ յաղթական մրցմամբ՝ առաւելեալ քան զօտար շահաստանս Ասորոց եւ Եգիպտոսի, միանգամայն ասել, ՚ի կիսոյ ժԳ դարու՝ մանաւանդ յետ բարձման իշխանութեանն Անտիոքայ (1268), եւ նուաճման Պողոմայիսայ (Աքքեայ) յԵգիպտացոց (1291), ցկէս ժԳ-ին՝ եղեալ առաջին նաւահանգիստ եւ հրապարակ վաճառուց՝ հին արեւելեան աշխարհաց՝ Պարսից, Հնդեակ եւ անգամ ձենաց, եւ արեւմտեան աշխարհաց՝ Իտալիոյ, Աղանիոյ, Փռանկաց, Ֆլամանաց եւ այլոց ոմանց:

Ո՞րք ՚ի մերայնոց հանճար պարադէտ եւ ձեռն աջողակ, եւ յորում ամի կազմեաց, եբաց, եցոյց զԱյսա, հանդերձեալ՝ նաւակայիւք, ամբարտաւօք, բերդիւք ծովու եւ ցամաքի, մթերանոցօք, բաժտամբ, եւ ամենայն որ կարեւորն է մեծի եւ առաջնոյ աշխարհամուտ նաւակայանից պետութեան միոյ՝ ասպնջականի յոգուոնց պետութեանց. — ցարդ չէ ցուցեալ պատմութեան զարժանաւորն այն բազում դրուատեաց եւ զնոր նեցուկ պետութեան Հայոց՝ յոսկեղէն խարսխի. այլ հաւանիմ՝ թէ որ յետ Լեւոնի ամենահայեաց եւ ամենահասն էր ՚ի Հայս՝ արքայահայրն Կոստանդին՝ հնարեաց եւ զայս. գէթ անժխտելի է, զի առ կենդանեաւ նորին ՚ի յետին արդիւնական աման՝ զառաջինն ՚ի գայ Այս որպէս քաղաք շահաստանի»:



ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑԱՆԿ ԱՅԱՍ ՓՈՂԵՐԱՆՈՅԸ ՀԱՏԱԳՐՈՒԱԾ ՊՂԻՆՁ ԵՒ ԱՐԾԱԹ ԴՐԱՄՆԵՐՈՒ

Առաջինը՝ Հ. Օգ. վրդ. ի հրատարակած Հեթում Ա. արքայի պղինձ դրամներուն կը պատկանի: Երկրորդը՝ Ե. Թ. Ներսէսեանի հրատարակած Լեւոն Բ. ի արծաթ դրամներուն կը պատկանի: Երրորդը՝ հեղինակիս Պերճ Մ. Կարապետեանի Լեւոն Ա. պղինձներուն կը պատկանի:

Կասկածէ դուրս է որ այս երեք ցանկերուն մէջ մէջբերուած տեղանունը՝ Այսա քաղաքի փողեւրանոցին կը պատկանի:

- 1.- Ա, ԱԱ, ԱԻ, ԱՍ, ԱԻԱ, ԱԻՍ, ԱՍԱ, ԱԻԱԻ, ԱԻԱՍ, ԱԻԱՍ, ԱԻԱՍ, ԱԻՍԻ, ԱԻԱԻԱ, ԱԻԱԻԱ.
2.- ԱԱ, _____ ԱԻԱ, ԱԻՍ, _____ ԱԻԱԻ, _____ ԱԻԱՍ, _____ (1):
3.- _____ ԱԻՍԻ, ԱԻՍԻՍ, ՍԻՍԻՍԻ, ՍԻՍԻՍ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ մէկ ցանկի բոլոր պղինձները առնուած են Վիեննայի Մխիթարեան թանգարանէն: Թիւ երկու ցանկի արծաթ դրամները դարձեալ առնուած են Մխիթարեան թանգարանէն եւ հեղինակի անհատական հաւաքածոյէն:

(1) Թիւ 2 ցանկը, անկախ հեղինակի անհատական դրամներու հաւաքածոյէն, տուած է խիստ կարեւոր ցանկը այն արծաթ դրամներուն որոնք կը գտնուին Վիեննայի Մխիթարեան թանգարանի մէջ, թիւով 31 դրամ, զրկուած Օգ. վրդ. Սեբուկեանէ:

Թիւ երեք ցանկի դրամները քաղուած են Վիեննայի, Վիեննայի, Համազգայիի Փայանձեան եւ Փարիզի Ազգային Մատենադարանի դրամներու ցուցասրահի Կ. Շլումպերկէր հաւաքածոնէրէն:

Լեւոն Ա. թագաւորի պղինձները տպաւորիչ են եւ կը ներկայացնեն մեր թագաւորը ներկայացնող թագապսակ առիւծի գլուխ մը թաւ մօրուքով:



Որպէս վերջաբան կ'ողջունենք Հ. Օգոստինոս վրդ. Սեբուկեանի Հեթում Ա. ի Այսա հատարուած դրամներու յայտնութիւնը, ինչպէս նաեւ ՀԱՅ ԴՐԱՄՆԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԻԻՒՄ հրատարակիչ Ե. Թ. Ներսէսեանը, որ Լեւոն Բ. թագաւորի ոմանց Այսա հատարուած արծաթ դրամներու յայտնութիւնը կատարած է:

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Յ. Գ. Հաւաքածոյիս մէջ պահած եմ երկու կողմէն ծակուած բազմաչարչար արծաթ դրամ մը, որուն պատկերագրութիւնը նման է Լեւոն Գ. թագաւորի դրամներուն: Անոր երկորոգ խորագիրն է՝ Շին. . . ի ԳԱՂԱՔ ԱԱ